

Title: **GIDEON**

by Dr. w. euGene Scott, PhD Stanford University,
Preached at the Los Angeles University Cathedral
Copyright ©2007, Pastor Melissa Scott; all rights reserved

Վերնագիր. ԳԵՂԵՈՆ

Դր. Ժենե Սքոտի կողմից Ստենֆորդի համալսարանի պրոֆեսոր,
Քարոզվել է Լոս-Անջելեսի «Յունիվերսիթի կաթոլիկ»-ում
Հեղինակային իրավունք © 2007թ. Հովիվ Մելիսսա Սքոտ. բոլոր իրավունքները վերապահված են
(Բոլոր աստվածաշնչյան մեջբերումները կատարված են Աստվածաշնչի Արարատյան թարգմանությունից)

ԳԵՂԵՈՆ

Բացեք, խնդրում եմ, Հին կտակարանի Դատավորաց գրքի 6-րդ գլուխը: Այն գտնվում է իմ Աստվածաշնչի 298-րդ էջում: Հիմա նայեք այս Աստվածաշնչին. այս Աստվածաշունչը յոթ տարի հալումաչ է եղել: Ես պատրաստվում եմ այսօր հրաժարվել այս Աստվածաշնչից: Յոթ տարին բավական է Աստվածաշունչը մինչև վերջ հալումաչ անելու համար, և ութերորդ տարում ես անցնում եմ այս մյուս Աստվածաշնչին: Բայց գոհություն Աստծուն, որ այս մեկը պահպանվեց մինչև յոթերորդ տարվա վերջը:

Դատավորաց վեցերորդ գլուխ: «Եվ Իսրայելի որդիքը Տիրոջ առաջին չարություն արին, և Տերը նրանց յոթը տարի Մադիանացիների ձեռքը մատնեց»: Այս ուղերձը հասնում է յուրաքանչյուր անհատի, ով լսում է այն, ինչպես նաև այս եկեղեցուն և ինձ: Ես հավատում եմ Աստվածաշնչի մեջ հիմնական միտքը զարգացնելուն և ամբողջացնելուն, և ես ցանկանում եմ, որ ինքդ քեզ հարցնես տնտեսական անկման այս ժամանակներում. «Արդյո՞ք քո վիճակն ավելի վատ է, քան սա»: «Եվ Իսրայելի որդիքը Տիրոջ առաջին չարություն արին, և Տերը նրանց յոթը տարի Մադիանացիների ձեռքը մատնեց». յոթ տարի:

«Եվ Մադիանացիների ձեռքը Իսրայելի վրա սաստկացավ. Իսրայելի որդիքը Մադիանացիների պատճառով իրանց համար սարերի մեջ խոռոչներ, քարայրներ և պատնեշներ շինեցին». նրանք այդտեղ էին ապրում: «Եվ երբ որ Իսրայելացիները սերմ էին ցանում, Մադիանացիները նրանց վրա էին գալիս. և Ամադեկացիները և արևելքի բնակիչներն էլ էին նրանց վրա գալիս. Եվ նրանց դեմ բանակ կազմելով փչացնում էին գետնի բերքը մինչև Գազա, և Իսրայելի մեջ ապրուստ չէին թողնում, ոչ ոչխար, ոչ արջառ և ոչ էշ: Որովհետև նրանք իրանց հոտերով և վրաններով վեր էին կենում, և մարախի պես բազմությամբ գալիս, այնպես որ նրանց և նրանց ուղտերին թիվ չկար, և երկիրն էին գալիս, որ նրան փչացնեն»:

Հիմա, ես չեմ կարող շատ բան ավելացնել այս աստվածաշնչյան նկարագրությանը. նրանք ապրում էին քարայրներում: Ամեն անգամ, երբ նրանք մի փոքր բերք էին ունենում, թշնամին մորեխների մման գալիս և կուլ էր տալիս այն: «Եվ Իսրայելը Մադիանացիների պատճառով շատ աղքատացավ և Իսրայելի որդիքը Տիրոջն աղաղակեցին Մադիանացիների պատճառով, Տերը Իսրայելի որդկանց համար մեկ մարգարե ուղարկեց. և նա ասեց նրանց. Իսրայելի Տեր Աստվածն այսպես է ասում. Ես ձեզ Եզիպտոսից հանեցի, և ձեզ ծառայության տանիցը դուրս բերի»: Եվ չկարողալով շարունակությունը՝ ասեմ, որ այն ամենը, ինչ այս մարգարեն արեց, այն է, ինչ այս քարոզիչն արել է յոթ տարի. հիշեցնել աղաղակող ժողովրդին: Հիմա որոշ մարդիկ մտածում են. «Դե, նրանք Տիրոջն աղաղակեցին, և Տերը նրանց պատասխան տվեց»: Որոշ չափով այո, բայց և այնպես նա չուղարկեց կայծակի մի հարված և չսպանեց բոլոր մադիանացիներին: Նա պարզապես չոչնչացրեց նրանց մեկ օրում և չուղարկեց հրեշտակների մի խումբ՝ սեպերով ծածկոցաշալերով, որոնք շեփորներ էին նվագում կամ փչում՝ մմանվելով բարձունքին կանգնած կապույտ համազգեստ հագած փրկության հեծելագորի, որն օգնության էր եկել հնդկացիների կողմից շրջապատված խղճուկ ջոկատին: Չափազանց շատ մարդիկ սխալ ձևով են փնտրում իրենց հրաշքը: Մարգարեն նա է, ով խոսում է Տիրոջ Խոսքը, և այն ամենը, ինչ այս մարգարեն արեց, ժողովրդին ասելն էր այն, ինչ նրանք արդեն պետք է իմացած լինեին, այսինքն՝ Աստծո անցյալում կատարած գործերը:

Աստված գրել է այս Գիրքը մի պարզ ճշմարտություն սովորեցնելու նպատակով. Աստված հավատարիմ է: Հավատքը մարմնովդ Աստծո Խոսքից ամուր կառչելն է: Մա կարող է անհեթեթ արտահայտություն թվալ, բայց Աստված Իր մարմնով, ինչ էլ դա նշանակի, ամուր կառչում է Իր Խոսքից, քանզի ասվում է: «Ով Տե՛ր, Քո Խոսքը հավիտյան հաստատ է երկնքում»: «Աստված մարդ չէ, որ սուտ խոսի, ոչ էլ մարդի որդի, որ գղջա»: Երբ Նա խոսում է, Նա պատրաստվում է դա անել:

Մի մարգարե ուղարկվեց: Ես համոզված եմ, որ շատ մարդիկ, ովքեր աղաղակել են Տիրոջը, կգերադասեին, որ հրեշտակներ գային մի ամբողջ շքերթով կամ կայծակի հարվածը ոչնչացնեք այդ մադիանացիներին: Յոթ տարին երկար ժամանակ է: Հավատացեք ինձ, հիմա ես դա գիտեմ: Նա մարգարե ուղարկեց: «Իսրայելի Տեր Աստվածն այսպես է ասում. Ես ձեզ Եզիպտոսից հանեցի, և ձեզ ծառայության տանիցը դուրս բերի»: Ի՞նչ նորություն կա: Այս յոթ տարիների ընթացքում քանի՞ անգամ եք լսել, որ ես ձեզ ասում եմ. «Մենք նոր ճշմարտությունների կարիք չունենք: Մենք պարզապես կարիք ունենք վերահայտնաբերել հները»:

«Ասա նրանց», - սա այն է, ինչ Աստված ասաց մարգարեին: «Ասա նրանց... ասա նրանց անցյալում եղածը»:

Միևնույն ժամանակ Աստված գործի անցավ: «Եվ Տիրոջ հրեշտակը եկավ», ոչ թե հրեշտակների մի բանակ, այլ մի հրեշտակ: (Մադիանացիները նման էին մորեխների): «Եվ Տիրոջ հրեշտակը եկավ»: Հիասքանչ է իմանալ, թե ինչ կարող է անել մի հրեշտակը: Այս վերջին տարիներին ես ձեզ մի քանի անգամ ասել եմ, որ մենք կարիք ունենք մեր աչքերը լավ բացել և տեսնել այն, ինչ ասում է Աստվածաշունչը:

Այսօր ամենուրեք շրջանառում են ամենահիմար գաղափարներից մի քանիսը: Երբե՛ք չասես փոքրիկ Ջոննիին . «Քեզ հրեշտակի պես պահի՛ր»: Նա կարող է ամբողջ քաղաքը ոչնչացնել:

«Եվ Տիրոջ հրեշտակն եկավ, և Աբիեզերյան Հովասի բեկկնիի տակին նստեց, որ Եփրայի մեջ էր, և նրա որդի Գեդեոնը կալում ցորեն էր ծեծում Մադիանացիների երեսից փախցնելու համար»: Ինչպիսի՞ տեղ ցորեն ծեծելու համար: Չեզանից քանի՞սը գիտեն, որ կալում ցորեն չի աճում: Այդ օրերին նրանք գինին այսպես էին պատրաստում. խաղողը դնում էին հողի մեջ փորված փոսի մեջ և, հանելով իրենց սանդղակները, ոտքի մատներով ճզմում էին այն: Լավ գինին համարվում էր ոտքի մատներով խառնված գինին: Ի՞նչ եք կարծում, որտեղից է գալիս այն սովորույթը, որ գինին պետք է թողնել, որ որոշ ժամանակ հասունանա: Իհարկե, իմ լավ հին ինքնաարդարացնող, կղերական ընկերները չեն իմանա դա: Գիտեք, ջուրը պետք է որ սարսափելի վատ լիներ, եթե Պողոսն ասում էր. «Մի քիչ գինի գործածիր քո ստամոքսի համար»: Նրանք կոխ էին տալիս կամ ավելի շուտ տրորում խաղողը և գինին մզում խաղողի այգում հողի մեջ փորված հորի մեջ: Գեդեոնը գտնվում էր այնտեղ ոչ խաղողի բերքի ժամանակ: Նա կալում գտել էր ամենացածր տեղը և այնտեղ մի քիչ ցորեն էր ծեծում: Նրա մեծագույն հույսն էր՝ մեկ օրվա համար բավականաչափ ցորեն բավականաչափ հացի համար:

Մենք այսօր ոչ մի տեղ չենք գնա, մինչև ամեն մեկը չկարողանա իրեն դնել Գեդեոնի տեղը. ստոր, անհույս, յոթ տարի շարունակ հանգամանքներից ճնշված մարդ, որը փորձում է բավականաչափ հաց գտնել և վախով պահել այն մեկ օրվա համար: «Եվ Տիրոջ հրեշտակը նրան երևացավ և ասեց. Ով հզոր գորավոր, Տերը քեզ հետ»:

Եթե ես չմտածեի, որ այս հին Աստվածաշունչը մաս-մաս կլիներ, ես այն ուղղակի աղմուկով կփակեի: Աստվածաշնչի թարգմանության King James տարբերակը որոշ մարդկանց կարծիքով միգուցե բավականին լավ լիներ Պողոսի համար, բայց ես այդպես չեմ կարծում: Ես ասում եմ, քեզ համար ձեռք բեր King James և ապա ինձ հետ ուղղի այն: Դա այն չէ, ինչ հրեշտակն ասաց: Նա երբեք չասաց. «Տերը քեզ հետ, ով հզոր զորավոր»: Ո՞վ է երբևէ լսել հզոր զորավորի մասին, որը թաքնվում է կալում, որպեսզի ցորեն ծեծի: Տան մեջ փակված, թաքնված, բարձերը գլխիդ դրած, վախեցած օրվա առջև կանգնելուց. դա չի խոսում զորավոր մարդու մասին: Եվ բնագրում էլ այդպես չի գրված: Բնագրում ասվում է. «Տերը, նա, ով հզոր զորավոր է քեզ հետ»: Այս վկայակոչումը վերաբերում է ոչ թե Գեղեոնին, այլ Աստծուն, որը նրա հետ է: Քաջությունը (զորավոր լինելը) կապ ունի ոչ թե Գեղեոնի հետ, այլ զորավոր Մեկի, որը նրա հետ է, այսինքն՝ ամենակարող Տիրոջ:

«Հզոր զորավորը՝ հենց Ինքը Տերը, քեզ հետ է»: Քո իրավիճակը փոխված չէ, բայց. «Հե՛յ, Ես այստեղ եմ»: Շատ մարդիկ, գտնվելով նեղության մեջ, իրավիճակից դուրս գալու համար իրենք իրենց աղոթում են՝ նմանվելով մեծ կանաչ միջատների: Դա Աստծո եղանակը չէ:

Աշխարհն այսօր լի է քարոզիչներով, ովքեր կասեն քեզ, որ դու կարող ես ընդունել որոշ հոգևոր հարեր, և քո խնդիրները կլուծվեն: Գեղեոնի հանգամանքները մի նշույլ անգամ չէին փոխվել: Նա դեռ կալում էր, մադիանացիների թիվը մորեխների չափ էր: Ոչինչ մի նշույլ անգամ չէր փոխվել, բացի նրանից, որ Տերն Ինքը, որը հզոր զորավոր է, նրա հետ էր: Եվ Գեղեոնն ասեց Նրան. «Ոհ, Տեր իմ, եթե Տերը մեզ հետ է, ինչու՞ համար այս բոլոր բաները մեզ հասան. և ու՞ր են Նրա ամեն հրաշքները, որոնք մեր հայրերը մեզ պատմում են՝ ասելով. Թե Տերը մեզ Եգիպտոսից հանեց, բայց հիմա Տերը մեզ մերժել է, և մեզ Մադիանացիների ձեռքն է մատնել»:

Ես կարծում եմ, որ երբ թողնեմ այս Աստվածաշունչը, ես կջնջեմ Գեղեոնի անունը և կգրեմ ծեր Ժենեի անունը: Եվ ծեր Ժենեն ասաց Նրան. «Ոհ, Տեր իմ...», «եթե...», «ինչու...», «ուր...», «մերժել...»: Արդյո՞ք դա նման է զորավոր մարդու խոսքերի: Այս ուղերձի ողջ իմաստը սկսվում է այստեղից: Ես լսում եմ, թե ինչպես են որոշ մարդիկ քարոզում Աստծո Խոսքը և ինչպես են այն ներկայացնում, լսեք, ես չեի գնա և չեի լսի նրանց: Իրենց խոսքով նրանք քեզ ոչ մի տեղ չեն հասցնում: Հասկանում եք, ես կարող եմ միացնել իմ գլխի փոքրիկ մեխանիզմը և երևակայել. «Վու~, վու~, վու~», իսկ հոգևոր իրականությունը սավառնում է խնդրից 40 ոտնաչափ վերև: Ես չեմ կարող այնտեղ հասնել:

Յոթ տարի է, ինչ ես այստեղ քարոզում եմ: Նախքան այստեղ գալը ես ևս մի քանի տարի քարոզել եմ: Ես դեռ ազատագրված չեմ: Վերջին անգամ այս առավոտյան եմ ասել. «Օ~, Տե՛ր իմ»: Դու պետք է հարցնես իմ ծնողներին: Ես դա նրանց հեռախոսով ասացի. «Օ~, Տե՛ր իմ», «եթե...», «ապա ինչու...», «ուր եմ...»: Դե՛, հետևեք ինձ այս առավոտ: Քանի՞սն են երբևէ այդպես խոսել իրենց իրավիճակի մասին: Հաջորդ կիրակի մենք տեղի կարիք կունենանք նրանց համար, ովքեր էդպես չեն խոսել: Ես նկատի ունեմ, որ դուք արդեն պատրաստ եք երկնքի համար, ուստի նույնիսկ տեղ մի՛ զբաղեցրեք այստեղ վաղը կամ հաջորդ կիրակի: Ուղղակի տեղ տվեք մեկ ուրիշին: Այս ուղերձը ինձ նման մարդկանց մասին է: Եվ գիտե՞ք, թե ինչն է ինձ դուր գալիս դրանում: Տերն այնտեղ էր, մինչ նա այդպիսին էր: Տերը տեսավ նրան կալում:

Ես սա անվանում եմ «կասկածի բառարան»: «Ոհ, Տեր իմ...», «եթե...», «ինչու...», «ուր ...», «մերժված...»: Եվ Տերը նրան նայեց և ասաց. «Հիմա՛ր մարդ: Գիտե՞ս, թե որոշ մարդիկ ինչ կանեին, եթե Ես նրանց մոտ գայի»: Երեսնիվայր կրնկներն և կասեին. «Հալելույա» կամ «Հա~հ-հա~հ-հա~հ», բայց այս տխմարությունը դուրս չէին տա: Ես չեմ համագործակցում «եթե», «Օ~, ...իմ», «ուր», «մերժված» ասողների հետ: Ես գիտեմ մի հեռուստատեսային ալիք ինչ-որ ուրիշ տեղ, որտեղ մարդիկ քահ-քահ ծիծաղում են, բղավում և շատ երջանիկ են: Ես կարող եմ այնտեղ գնալ: Այդպիսի բաներ Ինձ մի ասա: Ես այստեղ եմ: Ես եմ Տերը: Չգիտե՞ս, թե ով եմ Ես: Ոչ ոք Ինձ հետ այդպես չի խոսում»: Արդյո՞ք Նա այդպես ասաց:

Տասնչորսերորդ խոսք: Գեդեոնի «Ոհ, Տեր իմ» խոսքերից հետո Տերը չարեց այն, ինչ ես հենց նոր նկարագրեցի: «Եվ Տերը նայեց նրան և ասաց. Գնա քո այդ գորությունով և ազատիր Իսրայելին Մադիանացիների ձեռքից»:

Մեկ մարդ: Երբ նա վերջապես դուրս է գալիս նրանց դեմ, մեկ բարձունքի վրա նրանց թիվը հասնում էր քառորդ միլիոնի: Դա բյուրոկրատական գործակալության պես է հնչում. քառորդ միլիոն՝ մեկ բարձունքի վրա: Հենց այդպիսին է մեր տնտեսական անկումը: Չարմանալի չէ, որ Իսրայելը աղքատացավ. մեկ մարդ: «Եվ Տերը նայեց նրան՝ «Ոհ, Տեր իմ...», «եթե...», «ինչու...», «ուր ...», «մերժված...» ասողին, և ասաց. «Գնա քո այդ գորությունով և ազատիր Իսրայելին Մադիանացիների ձեռքից»: Սա նշանակում է, որ Իսրայելին ազատելու նրա գորության գաղտնիքը կայանում է այս խոսքերում. « Ահա Ես եմ քեզ ուղարկում»:

Հիմա, եթե կա որևէ մի բան, որ ես գիտեմ, այն է, որ միգուցե ես տրտնջացող եմ, բայց համր չեմ: Այս յոթ տարիները սովորեցրել են ինձ, որ միայն Աստված կարող էր ինձ այստեղ պահել: Ես գիտեմ, որ Նա է ինձ ուղարկել և կարծում եմ, որ եթե կա մի բան, որ դուք գիտեք, այն է, որ ձեզանից շատերին Աստված ուղարկել է, որ մասնակից լինեք այս աշխատանքին:

«Տերը նայեց նրան և ասաց. Գնա, - առաջ շարժվիր, - քո այդ գործությունով... ահա Ես եմ քեզ ուղարկում»: Դու ասում ես. «Ես չգիտեմ՝ արդյո՞ք Աստված ուղարկել է ինձ»: Էլ ինչի՞ համար ես դու քրիստոնյա, եթե չես հավատում Աստվածաշնչին: Աստվածաշունչն ասում է. «Տերովն է հաստատվում մարդիս գնացքը»: Աստվածաշունչն ասում է. «Քո բոլոր ճանապարհներում ճանաչիր Նրան, և Նա կուղղե քո ճանապարհը»:

Շատ մարդիկ կարծում են, որ սրբությունը արտաքին տեսքի «մաքրված և փայլեցրած» փոփոխությունն է: Սրբությունը նվիրում է: Ես գիտեմ և համոզված եմ, որ դու էլ գիտես, որ ուրիշ ոչ մեկը դրա դատավորը չէ. միայն Տերը, ով գիտի սրտերը, կարող է դատել: Դու գիտես՝ արդյո՞ք դու Տիրոջը ասել ես «այո»: Դու գիտես՝ արդյո՞ք դու նվիրել ես քո կյանքը Աստծուն, թե՞ ոչ:

Խնդիրը նրանում է, որ այսօր ամենուրեք առկա են այս ու այն կողմ վազվզող շատ տարօրինակ ձայներ՝ այնպիսի գերհոգևոր ուղերձներով, թե Աստված պետք է խոսի քեզ հետ և ասի, թե որ տեսակի թղթե սրբիչներից գնես, երբ գնաս դեղատուն: Ես կարծում եմ, որ ավելի լավ է Տիրոջից ձայն լսես նախքան այսօր հաբեր գնելը: Համոզված եղի՛ր, որ դրանք լավ փակված են և խուսափի՛ր պատիճներից այն ամեն հիմարության հետ մեկտեղ, որ առկա է այսօրվա աշխարհում: Բայց իրականում խիստ կարիք է եղել, որ Աստված բացահայտ խոսի: Աստված արդեն խոսել է: Նա ասում է. «Դի՛ր քո կյանքը Իմ ձեռքերի մեջ, Ես կառաջնորդեմ այն»: Խնդիրը նրանում է, որ քանի որ դա նման չէ Նրա ճանապարհին, ես ուզում եմ կալի մեջ մի փոքր ավելի խորը փոս փորել և թաքնվել: Աստված ասում է. «Դուրս արի այստեղ: Ահա քո գործությունը. Ես քեզ հիմա ուղարկում եմ մարտահրավերների ասպարեզ»:

Շատ մարդիկ մտածում են, որ եթե հրեշտակը նրան ասեց այդ բանը, նա պետք է ասեր. «Այո, սե՛ր»: «Եվ նա Նրան ասեց, - հիմա Գեդեոնի հերթն է, - Ոհ, Տեր իմ, ես ինչո՞վ ազատեմ Իսրայելին, ահա իմ ազգատոհմը աղքատ է, և ես իմ հոր տան կրտսերն եմ»: Եվ Աստված ասաց. «Արդեն բավական է: Երկու անգամ ասացի քեզ: Շրը~խկ: Տվեք նրան այն, ինչ ցանկանում է: Նրան դարձրեք աղքատ: Ես

համաձայն եմ, հաստագլուխի մեկը: Մնա այստեղ, և ես կգտնեմ մեկին, որը Ինձ հետ կասկածանքով չի խոսի»:

Գա 16-րդ խոսքն է: Արդյո՞ք Տերն այդպես ասաց: Քեզ հարկավոր է Աստվածաշունչ ձեռք բերել և կարդալ, որովհետև չես իմանա, մինչև չստուգես: Տերը նրան ասաց. «Դու՝ մեծաբերան տրտնջացող հիմար»: Ոչ: Տերը նրան ասաց և հիմա արդեն երրորդ անգամ. «Ես քեզ հետ կլինեմ»: Դե, դա բավական է Գեղեճնի համար: Երեք անգամ Տերը խոսեց: «Տղա՛, դա բավական է»: «Շատ լավ, ու՞ր ես ուզում, որ ես գնամ»: Դի՞շտ եմ. թե ոչ:

«Այս ուղերձի ներածությունը շատ երկար է. ես պատրաստվում եմ մի քոպեից վեր կենալ և գնալ»: Ես ուզում եմ, որ դու տեսնես, որ Աստված սովոր է գործ ունենալ իմ ու քեզ մման մարդկանց հետ: Այն ամենը, ինչ Գեղեճնն արեց, կասկածի լեզվով մվնվալն էր. «Ոհ, ...իմ», «եթե...»: Շրջանագծի մեջ առեք այս խոսքերը. «Ոհ, Տեր իմ...», «եթե...», «ինչու...», «ուր ...», «մերժել...», «Ոհ, ...իմ», «ինչով...», «աղբատ...», «կրտսեր...»:

Եվ Տերը նրան ասաց. «Դու ասացիր: Մնա այդպես»: Շնորհակալություն Աստծուն, որ Նա այդպես չասաց: «Եվ Տերը նրան ասաց. Ես քեզ հետ կլինեմ»: Ոչինչ չփոխվեց. ոչինչ չփոխվեց խոսակցության սկզբից մինչև հիմա: Իրավիճակը նույնն է. Գեղեճնը նույնն է. Տերը նույնն է: Ոչինչ չփոխվեց: Տերն ասաց. «Ես քեզ հետ կլինեմ»:

Գեղեճնը պետք է բերանը փակեր, բայց չփակեց: «Եվ նա նրան ասեց. Աղաչում եմ, եթե ես քո աչքի առաջին շնորհ գտա, ինձ մի նշան ցույց տուր»: «Ինձ մի նշան ցույց տուր»: Եվ Աստված ասաց. «Շատ լավ, ես քեզ նշան ցույց կտամ»: Ուրախ չե՞ք, որ ես Աստված չեմ: Ես նկատի ունեմ, որ եթե ես Աստված լինեի, և ոչ թե Գեղեճնը, բայց ես Գեղեճնի մման եմ, այնպես որ ես կարեկից եմ քեզ: Ես նկատի ունեմ, որ եթե ես Աստված լինեի...ինչպես ասում եմ, եթե դու ցանկանում ես շատ խիստ վարվել գողի հետ, այնպես արա, որ դատարանի կազմում գող լինի, որը դատում է մեկ այլ գողի: Ես այնքան մման եմ Գեղեճնին, որ նրան կսպանեի: Երբ նա ասաց, որ իրեն նշան ցույց տրվի, ես նրան մի այնպիսի ապտակ կհասցնեի, որը երբեք չէր մոռանա: Նա կարթնանար ինչ-որ տեղ հավիտենության մեջ և կասեր. «Ես ստացա նշան: Մոռաճեք այդ մասին, դա վերջին բանն է, որ ես հիշում եմ»:

«Ինձ մի նշան ցույց տուր, թե Գու ես ինձ հետ խոսողը»: Մի՞թե դա վիրավորական չէ: Ես նկատի ունեմ, որ Տերը նրա հետ մեկ ժամ խոսում էր, իսկ նա ասում է. «Ինձ մի նշան ցույց տուր, թե Գու ես ինձ հետ խոսողը»: «Մի գուցե գնաս այստեղից, Աստվա՛ծ»: Եթե մի բույս դադար տաք, մի՞թե սա ծիծաղելի խոսակցություն չէ: Ես նկատի ունեմ, նա այնտեղ է՝ կալում: Նա չի ասում. «Օ~, Աստվա՛ծ իմ, Գու հրեշտակ ես»: Նա նվնվալով շարունակում է խոսակցությունը: Ի վերջո, Տիրոջը դա զգվեցնում է: Իսկ Գեղեճը շարունակում է ասել. «Ինձ մի նշան ցույց տուր»:

Մի՛ գնա, մնա հենց այստեղ: Հեյ, Աստվա՛ծ, սպասիր ինձ: Ես հենց հիմա կվերադառնամ: «Աղաչում եմ՝ այստեղից չգնաս, մինչև որ ես քեզ մոտ գամ, իմ նվերը բերեմ և քո առաջը դնեմ: Եվ Նա ասաց. «Ես կմնամ մինչև քո ետ դառնալը»:

«Եվ Գեղեճը գնաց, այծերից մի ուլ , և մեկ արդու ալյուրից բաղարջ պատրաստեց. միսը մի սակառի մեջ դրավ, և արգանակն էլ մի կճուճի մեջ ածեց, և նրա առաջը հանեց այն բևեկնիի տակ ու մատուցրեց»: Մա Հին կտակարանի երկրպագության պատարագներից էր, որ կոչվում էր Մսի պատարագ: Այն քո Աստվածաշնչի լուսանցքում է, որը «նվեր» բառի այլընտրանքային տարբերակն է:

Նա հանկարծ կրոնական դարձավ: Հիմա սպասիր ինձ, Աստվա՛ծ... մինչ ես հոգևոր դառնամ: Ես նկատի ունեմ, որ մեր միջև ոչ մի հաղորդություն չի կարող լինել, մինչև ես կրոնական չդառնամ: Սպասիր հենց այստեղ, Աստվա՛ծ: Ինձ դա նույնպես դուր է գալիս: Գիտեք, նա պատրաստ չէր անմիջապես երկրպագել: Նա պետք է պատրաստվեր: Ես կարող էի ինչ-որ բան անել դրա հետ կապված:

«Գեղեճը գնաց, այծերից մի ուլ պատրաստեց...» և արեց մնացած բաները, ինչ գրված է: «Եվ Աստծո հրեշտակը նրան ասեց. Միսն ու բաղարջն առ, և այս վեմի վրա դիր, և արգանակը թափիր: Եվ նա այնպես արավ»: Հիմա Աստված սկսում է մինչև կոկորդը կշտանալ այդ ամենից: «Եվ Տիրոջ հրեշտակը իր ձեռքի գավազանի ծայրը մեկնեց ու մսին և բաղարջին դրավ, և վեմիցը կրակ դուրս եկավ, միսն ու բաղարջն այրեց, և Տիրոջ հրեշտակը նրա աչքերի առաջիցը գնաց: Եվ Գեղեճը տեսավ, որ նա Տիրոջ հրեշտակն է և Գեղեճն ասեց. «Ավա~դ»:

Ես նկատի ունեմ, որ նա պետք է որ ամենամեծ հոգևոր տկարամիտը լինի, որին մինչև հիմա հանդիպել ենք Աստվածաշնչում: Չկա մեկը, որ չկարողանա նույնանալ այս երջանիկ պատահականության հետ: Ես նկատի ունեմ, որ չկա մեկը իմ առջևում՝ հեռուստատեսությամբ,

ռադիոյով կամ այստեղ, որի սկզբնակետը Աստծո հետ ավելի վատ լինի, քան այս մեկը: «Ավա~դ, Օ~, Տեր Աստված: Ես տեսել եմ Տիրոջ հրեշտակին դեմ առ դեմ: Եվ Տերն ասեց նրան. «Դա ճիշտ է, տկարամի՛տ, և դու այլևս Ինձ չես տեսնի: Ես քեզանից ավելի լավին ունեմ»: Ոչ: «Բայց Տերը նրան ասեց. Խաղաղություն քեզ, մի վախենար չես մեռնիլ»:

Գիտե՞ք, թե ինչ է այս խոսքն ասում ձեզ: Այդ ժամանակվա աստվածաբանությամբ Տիրոջը դեմ առ դեմ տեսնելը անկասկած մահ էր նշանակում: Այս ամենից հետո, երբ «Գեղեոնը տեսավ, որ նա Տիրոջ հրեշտակն է», երբ Գեղեոնն ասաց. «Ավա~դ, Օ~, Տե՛ր Աստված», նա դեռ չէր երկրպագում: Ես կարծում եմ, որ դա տարօրինակ է: Երբ նա վերջապես որոշեց, որ հնարավոր է, որ դա Տերն է, նա ասաց. «Սպասի՛ր այստեղ: Ես պետք է պատրաստվեմ երկրպագության համար»: Հետո երբ նա երկրպագեց և գիտակցեց այդ բանը, Տերը նրան մահու չափ վախեցրեց. նա համոզված էր, որ մահանալու է: Դա նշանակում է, որ նրա երկրպագությունը նույնիսկ հավատքով չէր... որովհետև եթե նա համոզված լիներ, որ տեսել է Տիրոջը, նա կմահանար: Երբ նա ասաց. «Տե՛ր, սպասիր այստեղ», դրանից հետո, ինչպես «պահմտոցի» խաղում, նա կվազեր մինչև Հորդանանի խորխորատը՝ չցանկանալով տեսնել Տիրոջը:

Տեսնու՞մ եք հում նյութը: Կասկածամիտ, կեղծ երկրպագու, հանգամանքներից ճնշված, «կասկածի բառարանով» լցված մարդ: «Բայց Տերը նրան ասեց. Խաղաղություն քեզ, մի վախենար չես մեռնիլ: Եվ Գեղեոնն այնտեղ Տիրոջ համար մի սեղան շինեց»: Շրջանագծի մեջ առեք «այնտեղ» բառը: «Եվ Գեղեոնն այնտեղ Տիրոջ համար մի սեղան շինեց»: Որտե՞ղ: Կալի տարածքում, խաղողի այգում, որտեղ նա ցորեն էր ծեծում, այնտեղ, որտեղ նրա կասկածները ծածկել էին նրան ծրարի պես. նա այնտեղ գոհասեղան շինեց:

Հիմա, ժամանակակից մտքի համար գոհասեղանը ամբիոնի առջև գտնվող այս տարածքն է: Ես մեծացել եմ այնպիսի եկեղեցում, որտեղ դու փրկվում ես՝ գալով գոհասեղանի մոտ: Հին կտակարանի գոհասեղանի ողջ նշանակությունը կորել է: Չոհասեղանը մի վայր էր, որտեղ ինչ-որ բան մահանում էր, որտեղ պահանջները շտկվում էին: Չոհասեղանը մի վայր էր, որտեղ դու կանգնում էիր Աստծո առջև և մեռնող գոհի միջոցով ճանաչում Նրա իրավունքը և որևէ իրավունքից քո գուրկ լինելը: Չոհասեղանը մի վայր էր, որտեղ դու շտկում էիր կյանքի ուղղությունը: Եվ այս դեպքում, ինչպես միշտ, գոհասեղանի անունն ասում էր շտկման այն տեսակը, որը պետք է կատարվեր: «Եվ Գեղեոնն այնտեղ մի սեղան շինեց և նրա անունը Եհովա-շալոմ կոչեց»: Խաղաղություն՝ «Տեր-խաղաղություն»:

«Խաղաղությունը» մեկ այլ գերհոգևոր բառ է: Որոշ մարդիկ մտածում են, որ դու կարող ես աղոթել այնքան, մինչև խաղաղություն ստանաս: Խաղաղությունը սովորական լեզվով նշանակում է «հակառակության դադարում»: Թշնամությունը կանգ է առնում, վեճը դադարում է, պատերազմը ավարտվում է, որևէ կողմը հանձնվում է: Խաղաղություն ունենալու համար պետք է ինչ-որ մեկը հանձնվի: Քանի որ այստեղ «Եհովա» բառն է կցված, որը նշանակում է «Ես եմ, որ եմ»՝ չփոփոխվող «Տերը», ուրեմն պետք է ոչ պայմանական անձնատուրություն լինի: Սա միակ բանն է, որ փոխվեց մինչև այս պահը: Գեղե՞տնը չէր փոխվել: Նա լցված էր կասկածով, վախով և կեղծ երկրպագությամբ: Իրավիճակը չէր փոխվել: Եթե երկրում մարդահամար անցկացվեր, մադիսանացիների թիվը այնքան կլիներ, որքան առաջ էր: Ոչ մի բան չէր փոխվել նրա իրավիճակի մեջ: Գեղե՞տնը մինչև այս պահը չէր փոխվել. նա նույնն էր: Եվ Աստված էլ չէր փոխվել:

Հիմա, Գեղե՞տնը փոխվում է: Ի վերջո սպառելով իր տրտունջները՝ նա դրական քայլ է ձեռնարկում: Նա կառուցում է զոհասեղանը, շտկում է իրեն, և հակառակությունը դադարում է: Հիմա միակ բանը, որ պետք է դադարեր, Աստծո հետ վիճելն էր: Աստված ասել էր. «Տերը քեզ հետ է: Ահա Ես եմ քեզ ուղարկում: Ես քեզ հետ կլինեմ»: Գեղե՞տնը պետք է հաշտվեր այնտեղ, որտեղ անփոփոխ իրավիճակ էր, դադարեր վիճել և իր կյանքը կրկին միացներ Աստծո խոստումին, որն է՝ «Ես քեզ հետ եմ: Ես եմ քեզ ուղարկում: Ես քեզ հետ կլինեմ»: Ոչ մի փոփոխություն դեռ չկար:

Եթե դու ցանկանում ես հավատքի մարդ լինել, և հենց դա է Հավատքի Կենտրոնի նպատակը..., եթե դու ցանկանում ես հավատքի հերոս լինել, դու պետք է դադարես սպասել, որ քո իրավիճակը փոխվի. դու պետք է դադարես սպասել, որ հրաշքը գա և քեզ փրկի: Հրաշագործն արդեն ներկա է: Հիմա միգուցե դու ասես. «Բայց ես չունեմ այդ խոստումները»: Սա կարող է քարոզչին շատ վայել չթվալ. «Գրողը տանի ինչպե՞ս թե չունեք: 66 գիրք ունես՝ դրանցով լիքը»:

Գեղե՞տնն ապրում էր հեթանոսության եզրին: Նա ապրում էր դատավորների օրերում, երբ Գրքում երկու անգամ ասվում է, որ երկրում բացահայտ ձայն չկար, և մարդիկ ստիպված էին անել այն, ինչը ճիշտ էր իրենց սեփական աչքերին: Ես կարող էի կանգնել այստեղ մինչև հաջորդ տարի այս ժամանակ և այդքան շատ անգամ չասել այն, որ Աստված նույն բաները ասել է քրիստոնյային: Քրիստոնեության ողջ նպատակը, ինչպես Նոր կտակարանում հռչակում են Եփեսացիների 1-ին և 2-րդ գլուխները, այն արգելքը քանդելն է, որը ստեղծել է մեր մեղքերը, որպեսզի Աստված Իր իսկ նախաձեռնությամբ քանդի այդ պատը և գա ու լինի մեզ հետ:

Աստված խոստացել է... Մեծ պատվիրանի նպատակը եկեղեցուն ուղարկելն է: Եկեղեցին գոյություն ունի նրա համար, որպեսզի անի այն, ինչի համար Աստված մեզ ուղարկել է, այսինքն՝ հռչակել Նրա Խոսքը: Մենք ուղարկվել ենք, յուրաքանչյուր անհատ մասնակից է: Դու նմանվում ես միսիայի այն մեծ հայրերից մեկին, որը, լինելով կոշկակար, ասում էր. «Ես հիմա կոշիկներ եմ կարում, որպեսզի կարողանամ այս մյուս աշխատանքն անել»: Դու այլևս չես ապրում, որպեսզի ևս մեկ օրվա համար բավականաչափ ապրուստի միջոցներ հայթայթես: Դու ընդունում ես Աստծո պահանջը քո կյանքի համար: Դա այն է, ինչ ջրային մկրտությունը կասի Տարեդարձի գիշերը: Երբ մենք ընկղմվում ենք այդ ջրի մեջ և ապա դուրս գալիս, դա խորհրդանշում է կյանքի նորոգությունը: «Ես ընդունում եմ Տիրոջ պահանջը»: Այդ է պատճառը, որ ես դեմ եմ այսօրվա մարդասիրական քարոզներին, որոնք Աստծուն դարձնում են միջանցքային սպասավոր, մատուցող, մարդու ծառա:

Գեղեոնը պետք է ընդուներ այն փաստը, որ երբ Աստված ինչ-որ բան է ասում, չպետք է վիճել դրա հետ: Աստված ասել է, և Հիսուսն ասել է դա կրկին ու կրկին. «Երբեք չեմ թողի քեզ և երեսից չեմ գցի»: Ոչ մի քրիստոնյայի երբևէ չի տրվել խոստում, որ նա դժվարություններ չի ունենա: Իրականում Հիսուսն ասաց. «Աշխարհում կունենաք նեղություններ»: Այստեղ օգտագործվում է լատիներեն կամ լատիներենին ազգակից *tribulum* բառը, որը նշանակում է գավազան, որով դու ծեծում ես ցորենը թեփից առանձնացնելու համար: Նա ասաց. «Դուք Վարդապետից ավելի լավը չեք: Ձեզ հետ կվարվեն այնպես, ինչպես Ինձ հետ վարվեցին»: Բայց նա ասաց. «Ես հաղթել եմ աշխարհին» ու «Երբեք չեմ թողի քեզ և երեսից չեմ գցի»: Մենք ունենք այն նույն խոստումը, որ Գեղեոնն ուներ, բայց մեզ համար որևէ բան ոչ մի արժեք չունի, մինչև մենք էլ չունենանք այդ հաշտությունը:

Ես ապաշխարության կոչ շատ չեմ անում, ինչպես որոշ քարոզիչներ են անում: Ես կարծում եմ, որ մակերեսային նվիրումները որքան որ մակերեսային են, այնքան էլ անիմաստ են: Դու կարող ես որոշում կայացնել, երբ լսում ես Խոսքը: Ոչ մեկն ավելի վատ վիճակում չէր, քան Գեղեոնը, և այս քարոզիչը այս եկեղեցում յոթ տարի հովվություն անելուց հետո յոթերորդ տարվա վերջին կիրակին ստիպված է կրկին կանգնել այս բանի առջև. «Արդյո՞ք Տերը ինձ հետ է»: Նա մեզանից յուրաքանչյուրի հետ է: «Արդյո՞ք Նա ուղարկել է ինձ»: Իհարկե, ուղարկել է: Ես սպասում եմ Նրա հրամաններին:

Դու ասում ես. «Դե, ես չգիտեմ, թե ուր եմ ուղարկվում»: Գեղեոնն էլ չգիտեր: Դու չես կարող որևէ թել գտնել, պարզապես ասվում է. «Ես եմ քեզ ուղարկում»: Դա կլինի քո գորությունը. «Ես եմ քեզ

ուղարկելու»: Նա նրան մի ակնարկ անգամ չտվեց, թե ուր պետք է նա գնա կամ ինչ է ենթադրում ուղարկված լինելը: Թարգմանաբար այն նշանակում է. «Ես եմ ղեկավարը, և երբ ես տալիս եմ հրամանը, դա է քո ուժը: Գու կատարում ես Իմ հրամանը: Վերջ խոսակցությանը»:

Ոչինչ չփոխվեց, մինչև Գեդեոնը չփոխվեց: Այս գոհասեղանի առջև նա ասաց՝ այո: Նա դադարեց վիճել: Չկար ոչ մի հրաման: Ըստ էության, քրիստոնեությունը սկսվում է կնքված հրամաններով, բայց նա, ով կրում է այդ կնքված հրամանները, գիտի, որ երբ դրանք բացվեն, նա գործի կանցնի: Գուրք նույնպես դա գիտեք: Մյուսները միգուցե չգիտեն, որ դուք գիտեք, բայց դուք գիտեք: «Եվ այն գիշերը...»:

Որոշ մարդիկ զարմանում են, թե ինչու նրանք երբեք Աստծուց որևէ ուղղություն չեն ստանում: Գու այն պատճառով է, որ դու դեռ այնտեղ նստած ասում ես. «Տուր ինձ ուղղություններ, և ես կորոշեմ»: Աստված այդպես չի գործում: Կառուցիր քո խաղաղության գոհասեղանը՝ Եհովա-շալոմը, և ասա. «Ինձ միայն հարկավոր է շուրջս նայել, որպեսզի իմանամ, որ այդքան էլ լավ չեմ վարել իմ նավը: Ես նույն խառնաշփոթի մեջ եմ, ինչի մեջ Գեդեոնն էր: Ես պատրաստվում եմ ասել՝ այո:

Գիտե՞ք, թե որքան երկար ժամանակ պահանջվեց ինձանից ասելու «այո», երբ ես եկա Հավատքի Կենտրոն: Ես եկա նոյեմբերին՝ յոթ տարի առաջ: Հաջորդ տարվա փետրվարյան մի օր ես պատրաստ էի հեռանալ այնտեղից այն հանձնարարության դժվարության պատճառով, որի առջև ես կանգնել էի: Այնպիսի շաբաթ էր, որ ես չէի ցանկանում այդ բանն անել, ուստի որոշեցի, որ պարզապես կհեռանամ: Ես ու Տերը այդ փետրվարյան օրը կռվեցինք մինչև վերջնական ելքը, և ի վերջո ներսումս ես ասացի՝ այո: Եվ դա է պատճառը, որ այստեղ գալու օրվանից ի վեր ես իմացա, որ ինձ ոչինչ չի տեղաշարժի, մինչև Աստված չտեղաշարժի: Ուրիշ ոչինչ: Ամեն մեկը կարող է կատարել այդ նվիրումը:

Ես այնքան հոգնած եմ մարդկանցից. ես դեմ չեմ, որ նրանք նման են Գեդեոնին, երբ սկսում են, բայց ես այնքան հոգնած եմ այն մարդկանցից, ովքեր պարծենում են նրանով, թե ինչպես է Աստված ուղարկել իրենց. հետո առաջին իսկ փոքրիկ խոչընդոտին հանդիպելով՝ նրանք ինչ-որ տարօրինակ ճանապարհ են մտածում, որպեսզի ստիպեն Աստծուն փոխել իր միտքը: Աստված 100%-ոց նվիրում է ակնկալում:

«Եվ այն գիշերը, - սպասեք որոշ հրամաններ, երբ ասում եք «այո», -Տերը նրան ասեց. Առ քո հոր զվարակը և յոթ տարեկան երկրորդ զվարակը»: Քանի որ դուք ասում եք «այո» այսօրվա ծառայության

Ժամանակ, ես չեմ ցանկանում, որ որևէ մեկը մտածի դուրս գալ և գնալ ինչ-որ ազարակ և փորձել մի կով գտնել: Սա հատուկ նշանակություն ուներ այդ ժամանակվա երկրագութքյան մեջ: Աստված հիմա դա այլ կերպ է անում:

«Եվ այն գիշերը Տերը նրան ասեց. Առ քո հոր զվարակը և յոթ տարեկան երկրորդ զվարակը, և քո հոր ունեցած Բահաղի սեղանը քանդիր, և նրա վրայի Աստարովթը կտրիր: Եվ քո Տեր Աստծո համար մի սեղան շինիր այս ապառաժ քարի գլխին կարգով, և երկրորդ զվարակն առ, և քո կտրած Աստարովթի փայտերով ողջակեզ արա»:

«Եվս մեկ զոհասեղան: Հենց նոր մեկը պատրաստեցի: Ե՞րբ եմ ստանալու առաջինի համար իմ վարձքը: Հենց նոր զոհասեղան պատրաստեցի»: Ահա, թե ինչ է քրիստոնեությունը: Ահա թե ինչու որոշ մարդիկ երբեք չեն հասկանում այն: Նրանք վերջապես փրկվում են և հետո մնացած աշխարհին նայում՝ իբրև տարօրինակ ներկայացման, մինչդեռ այդ մարդիկ նույնպես պետք է նրանց հետ փրկվեն: Եվ նրանք միշտ ետ են նայում՝ ասելով. «Ես փրկվել եմ այսինչ ժամանակ այսինչ տեղում, է~յ, անարժաններ»: Նրանք փրկվելուց ի վեր ոչինչ չեն արել Աստծո համար, բացի որոշ մարդկանց ճանապարհին կանգնելուց:

Փրկությունը առաջ ընթացող, մշտապես ցուցաբերվող նվիրում է ուժգնացող ճնշման հետ միասին: Քրիստոնեության մեջ չկա թոշակի անցում: Երբ Պողոսը մահացավ, նա նոր էր սկսում: Դ-ա այն է, ինչ նա ասաց Տիմոթեոսին. «Ես նոր նավ եմ նստում, որը բեռնված է իր ճանապարհորդության համար: Ես վերջապես ոտք դրեցի նավի վրա»:

Քրիստոնեությունը նախապատրաստում է հավիտենության համար: Յոթ տարի հետո այն, ինչին այսօր կարող եմ հուսալ, յոթ տարվա հանգիստը չէ: Նոր սկիզբ, նոր պայքարներ, տարբեր տեսակի նոր պայքարներ: Յոթ տարիները հզորացրել են մեզ: Գեղեցուն ճիշտ է ճիշտ քրիստոնեության շրջանակներում: «Շունչդ պահիր: Դու ասացիր՝ այո: Հիմա դուրս արի խաղողի այգուց, գնա այնտեղ և մեկ ուրիշ զոհասեղան շինիր»:

Սա նվիրման զոհասեղանն է. նվիրվել ինչ-որ բան անելու համար: Ես չեմ պատրաստվում ժամանակ վերցնել և բացատրել դա ձեզ: Կարդացեք Գիրքը: Բայց ողջակեզը նվիրման խորհրդապատկերն է: Ողջակեզը խորհրդանշում էր այն, ինչ Քրիստոսն արեց մեզ համար մեր

արդարությունը ձեռք բերելու նպատակով: Նա մահացավ մեզ համար. Նա հնազանդությամբ տվեց Իր կյանքը: Նվիրման գործողության խորհրդանշան դարձավ այն, ինչ նա ասաց խաղաղության գոհասեղանի մոտ. «Շատ լավ, Աստվա՛ծ, ես ընդունում եմ, որ Դու ես ինձ ուղարկել: Հիմա ես պատրաստ եմ անելու այն, ինչ Դու ցանկանում ես»:

Գործողությունն ավելանում է վերաբերմունքին: Գիտե՞ք, թե ինչ պետք է Գեղեոնն աներ. իր դիրքը գրավեր Աստծո համար, որը ներառում էր որոշ առանձնացում: Ես ավելի ու ավելի եմ կորցնում իմ հարգանքը այսպես կոչված «ծածուկ սենյակի դիտորդների», «ծածուկ սենյակի քրիստոնեության» նկատմամբ: Աստված չեկավ ու չկառուցեց հոգևոր մենաստան և ոչ էլ կալում մեղրի ծառ տնկեց: Նա եկավ և Իր ուղերձը տվեց, հաստատեց Իր պահանջը, և Գեղեոնն ասաց. «Այո»: Հիմա Աստված ասում է. «Դուրս արի՛»:

Եվ քո առաջին քայլը առանձնացնելու է քեզ: «Գնա և մորթիր այդ բոլոր զվարակները. ես նկատի ունեմ, գնա և սպանիր մի զվարակի և կտրիր այդ Աստարովթները, և թող այդ գործողությունը հոչակի աշխարհին քո առանձնացումը նրանից, ինչը մինչ այդ կար: Գնա և այնպիսի բան արա, որը կհոչակի աշխարհին, որ դու Աստծո կողմից ես»: Այսպիսով Գեղեոնը վերցրեց իր ծառաներից տասին և արեց այնպես, ինչպես Տերն ասել էր նրան: Եվ քանի որ նա այդքան հաստատ էր իր հավատքի մեջ, և Աստված խոսել էր նրա հետ, նա գտավ մարդկանց, ովքեր թմբուկներ էին խփում, և երբ արևը դուրս եկավ, ու բոլորը պատրաստ էին տեսնելու, թե ինչ է նա անելու, նա հարվածեց թմբուկները և քայլեց օրը ցերեկով՝ ցույց տալով իր նվիրումը Աստծուն: Մի՞թե այսպես է ասվում:

Ոչ: Գրված է. «...և իր հոր տանից, և քաղաքի մարդկանցից վախեցավ ցերեկը անելու, և գիշերն արավ»: Ձեզ դա դուր չի՞ գալիս: Հիմա, ուշադիր, եթե դու ապավինում ես Աստծուն, որ օգնի քեզ, մի՞թե Աստված քնում է գիշերը կամ ցերեկը: Ես նկատի ունեմ, որ այն, ինչ Գեղեոնն իրականում ասում էր, սա է. «Ես հաշտվել եմ, և Աստված ասաց, որ ուղարկել է ինձ, բայց սա իմ առաջին ճանապարհորդությունն է, ուստի ավելի լավ է նվազեցնեմ տանուլ տալու վտանգը»: Նա հետևում էր Աստծուն այնպես, ինչպես որոշ մարդիկ բլեքշեք են խաղում. ապահովագրություն. ուի-ուի-ուի...եւ մի քիչ ավել կորցրեցի դրա վրա: Պետք չէ, որ խաղ խաղաս, որպեսզի բավականին խելացի լինես դա հասկանալու համար: Նվազեցնեմ տանուլ տալու վտանգը. այն դեպքում, երբ այս ամենը ուղղակի պատրանք լինի, և Աստված չօգնի ինձ՝ իմ նվիրումը ցուցաբերելիս, ավելի լավ է, որ ես դա գիշերն անեմ:

Հիմա եթե Աստված... նա իսկապես հավատաց Նրան: Մի՞թե Աստված չէր կարող ազատել նրան ցերեկը: Ինձ սա դուր է գալիս: Չկա ոչ մի կտրուկ պառակտում. սա այն է, ինչ ես փորձում եմ ասել ձեզ: Դուք չեք արթնանում ինչ-որ կիրակի և ասում. «Ես այսօր Աստծո ետևից եմ գնալու: Ես վերջապես որոշել եմ և ես օրհնում եմ Աստծուն: Եթե երբևէ դառնամ քրիստոնյա, ուրեմն այդպես ապրելու եմ: Եվ ես այսօր Աստծո հետ եմ գնալու, և ամբողջ աշխարհն իմանալու է այդ մասին: Գողիաթները կընկնեն: Ազգերը կդողան: Ինձ մոտ դա կստացվի»: Կան մարդիկ, ովքեր սպասում են նման բաների... և երբեք չեն գալիս Աստծո մոտ:

Աստված խոսեց Գեդեոնի հետ, և նա հաշտվեց, ապա նվիրվեց և դուրս եկավ խաղողի այգուց, բայց քանի որ վախենում էր, դա արեց գիշերը: Ինձ դա դուր է գալիս: Ինձ համար դա իրատեսական քրիստոնեություն է: Միգուցե քննադատեք նրան վախենալու համար, ասեք, որ նա պետք է դա աներ օրը ցերեկով, բայց և այնպես նա արեց դա: Նա տեղից շարժվեց:

Հազարավոր մարդիկ հետևում են ինձ՝ ծածուկ սենյակի դիտորդի դիրքում պազած. չափազանց մեծ գին Սքոտի հետ նույնանալու, համամիտ լինելու համար: Ես նկատի ունեմ, որ ես կարող եմ գնալ եկեղեցիներ, որտեղ իմ կյանքում նույնիսկ որևէ զգացողության ալիք չի առաջանում: Ոչ մեկին նույնիսկ չի հետաքրքրում՝ ես գնում եմ այնտեղ, թե ոչ, և ինձ չեն էլ կարոտում անկախ նրանից՝ ես այնտեղ եմ, թե ոչ: Դուք մոտիկից առնչվում էք Սքոտի հետ, և գիտեք, որ նրա քարոզած կրոնը զգացողությունների ալիք է առաջացնում: Ուստի ես պետք է մի եղանակ մտածեմ և թույլ չտամ, որ որևէ մեկը դա իմանա: Այսպիսով ես համոզվում եմ, որ տանը ոչ մեկ չկա, և ես փակում եմ դուռը, միացնում ալիքը և զարմանում:

Ինչ-որ մեկը գալիս է այցելության, և նրանք ասում են. «Ո՞վ է»: «Չգիտեմ»: Եվ այն մարդը, ով գալիս է, ասում է. «Ես դիտում եմ նրա հաղորդումները»: «Օ, իսկապե՞ս»: «Ես դիտում եմ նրա հաղորդումները ամեն ժամանակ»: Մեր մարդկանցից մեկը հիվանդանոցում էր գտնվում: Ինչ-որ մեկը եկել էր նրա մահճակալը ուղղելու... Այն ամենը, ինչ արձանագրվեց նրա մասին, սա էր. «Սողում է մահճակալի տակ»: Ես հայտնաբերեցի, որ նա հետևում էր ինձ. այդ մարդն ամեն օր «աշխատում էր, որպեսզի մահճակալը կարգի բերեր»: Նա գաղտնի հանդիսատես էր՝ մահճակալի տակ թաքնված: Ամեն ինչ լավ է: Նա արեց դա. ուղղակի շարունակում էր հետևել: Ես քեզ կըռնեմ ցերեկով: Չեզանից քանի՞սն են գոնե մեկ անգամ մթության մեջ եղել: Դե՛, ճտե՛ր: Հիմա դուք ցերեկվա լույսի մեջ եք: Նա արեց այնպես, ինչպես Աստված սովորեցրեց նրան: Նա արեց դա:

Հաջորդ առավուտ, «Եվ երբ որ քաղաքի մարդիկ առավուտը կանուխ վեր կացան, տեսան , որ ահա Բահադի սեղանը քանդված, և նրա վրայի Աստարովթը կտրված»: Նա գրավել էր իր դիրքը: Այս ամենը դա է նշանակում: Բոլորն իմացան, որ ինչ-որ մեկը դուրս է եկել խաղողի այգուց և թաքստոցից: Նրանք ասացին մեկը մյուսին. «Այս բանն ո՞վ արավ»: Եվ հարցուփորձ անելուց հետո ասացին. «Այս բանը Հովասի որդի Գեղեոնն է արել»:

«Եվ քաղաքի մարդիկ Հովասին ասեցին. Որդիդ դուրս բեր, որ մեռնի» այն պատճառով, ինչ նա արել էր: Այս ծեր մարդը իր կյանքում երբեք ոչ մի համարձակություն չէր ցուցաբերել: Նա երբեք ոչինչ չէր արել: Բայց երբ Գեղեոնը տեղից շարժվեց, չնայած որ դա արեց գիշերը, և մարդիկ վեր կացան, որ սպանեն նրան այն դիրքի պատճառով, որ նա գրավեց, ծեր մարդը հանկարծ համարձակություն ձեռք բերեց. «Եվ Հովասն իր վրա եկող բոլոր մարդկանց ասեց. Միթե դու՞ք եք Բահադի իրավունքը պաշտպանելու, կամ թե դու՞ք եք նրան ազատելու»: Հեթանոսական աստված: «Եթե նա աստված է՝ թող ինքը իր իրավունքը պաշտպանե նրա դեմ, որովհետև նրա սեղանը քանդել է»: Եվ ըստ էության նա ասում էր. «Եթե որևէ մեկը Գեղեոնի դեմ է դուրս գալիս, ինձանով պիտի անցնի»: Դուք կզարմանաք՝ իմանալով, թե որքան շատ մարդիկ են սպասում ձեզ ձեր քայլը անելու համար: Երբ ինչ-որ մեկը շարժվում է, անխուսափելիորեն մեկ ուրիշը այդ առաջին գործողության ցուցադրման մեջ խիզախություն կգտնի նրան հետևելու համար:

Հետո սկսվում է մեծ ճակատամարտը: Երբեք ավելի չի հեշտանում, ընդհակառակը, ավելի վատանում է: «Եվ բոլոր Մադիանացիները, Ամադեկացիները և արևելքի բնակիչները մեկտեղ ժողովվեցան, և Հորդանանիցն անցնելով Հեզրայելի հովիտում բանակ տվին»: Հիմա, եթե դուք մեքենայով անցնեք Սեդդիզի տափաստանը, կտեսնեք, որ ձախ կողմում վեր է խոյանում Թաբորի լեռը, այնուհետև Նազարեթի բլուրն է երևում, և դեպի արևելք, ապա մի փոքր հյուսիս և նորից արևելք գնալով կտեսնեք մի փոքր բլուր, որը կոչվում է «Փոքր Հերմոն»: Դա այն սարն է, որտեղ տեղի ունեցավ Գեղեոնի մարտը: Քառորդ միլիոն ամադեկացիներ և մադիանացիներ, որոնք յոթ տարի շարունակ ահաբեկել էին այդ տարածքը, բանակ էին դրել այնտեղ:

Հիմա, երբ Աստված պատրաստվում էր Գեղեոնին կանչել մեծ առաջադրանքը կատարելու համար, Աստվածաշունչն ասում է. «Եվ Տիրոջ Հոգին հանգչեց Գեղեոնի վրա»: Բառացի դա նշանակում է. «Աստված ծածկվեց Գեղեոնով»: Նա ծածկեց Իրեն Գեղեոնով. հազավ նրան՝ ինչպես հանդերձ: «Եվ

Գեղեոնն Աստծուն ասեց» նրանից հետո, երբ Աստծո չնոգին իջավ նրա վրա. սա է այն հիմնական միտքը, որի վրա ուզում են շեշտը դնել:

Յոթ տարի է, ինչ այս եկեղեցում ես քարոզում եմ այս ուղերձը: Շնորհակալություն Աստծուն, որ Գեղեոնի օրինակից ես կարող եմ տեսնել Աստծո չնոգուն և հնազանդությունը: Այս բաներից ոչ մեկը ամբողջությամբ չի փոխում հիմնական մարդուն:

Գեղեոնը դուրս էր եկել իր կալից: Չնայած գիշերը վախենալուն՝ նա կատարել էր աշխատանքը: Գեղեոնը ոգևորել էր ուրիշներին հետևել իրեն: Հիմա Տիրոջ չնոգին Գեղեոնի վրա էր, որովհետև Աստված միշտ ներկա է, որպեսզի տա քեզ ուժ, երբ տրվում է մեծ առաջադրանքը, և դու ձեռնարկում ես առաջին քայլերը, որոնք Նա կոչ է արել քեզ անել:

Բայց Գեղեոնը մնում է Գեղեոն: «Եվ Գեղեոնն Աստծուն ասեց. Եթե Իսրայելին իմ ձեռքովն ազատելու ես ինչպես որ արել ես, Ահա ես կալումը բուրդի գգաթ կդնեմ. եթե միևնակ գգաթի վերա ցող և բոլոր գետնի վրա չորություն լինի, այն ժամանակ կիմանամ որ Իսրայելին իմ ձեռքովն ազատելու ես ինչպես որ ասել ես»:

Ի՞նչ դու կանեիր, եթե Աստված լինեիր: Ես մոտենում եմ ավարտին, այնպես որ պինդ բռնվիր: Այն ամենից հետո, ինչ Աստված արեց, Գեղեոնն ասում է. «Շատ լավ, Աստվա՛ծ: Տիրոջ չնոգին ինձ վրա է, և Դու ինձ ուղարկել ես ու խոստացել, որ ինձ հետ կլինես, բայց եթե Դու իսկապես պատրաստվում ես իմ ձեռքով ազատել, եթե այն հաղթանակը, որ Դու խոստացել ես, գալու է, տու՛ր ինձ մեկ այլ նշան: Ես այստեղ ոչխարի բուրդ կդնեմ և առավոտյան, երբ արթնանամ ու ոչխարի բուրդը թաց լինի, իսկ գետինը՝ չոր, ուրեմն կիմանամ, որ Դու ես ինձ ուղարկել»: Նա խնդրեց անհնարինը:

«Եվ այնպես եղավ. որովհետև առավոտը կանուխ վեր կացավ, և գգաթը քամեց, և գգաթից ցողը հանեց, որ մի կոնք լիքը ջուր եղավ»: Հիմա Աստված կարող էր կանգնել այնտեղ և ասել. «Հիմա նա կբավարարվի. Ես ցող եմ դրել միայն գգաթի վրա, իսկ մնացած ամեն ինչ չոր եմ պահել»:

Եվ Գեղեոնն ասաց Աստծուն. «Հիմա, ինձ վրա չբարկանա...»: «Ըն բարկությունը ինձ վրա չբորբոքվի, և միևնակ այս անգամ էլ խոսեմ, միայն այս անգամ էլ գգաթով փորձեմ»:

«Հիմա մյուս ձևով արա՛, Աստվա՛ծ. այս անգամ թող միայն գգաթի վրա չորություն լինի: Գիտես, միգուցե Դու չես հասկացել, թե ինչ եմ ես Քեզանից խնդրել մյուս անգամները: Ե՛կ շրջենք: Այս անգամ գգաթը չոր պահիր, իսկ ամբողջ գետինը՝ թաց»: Ես ուղղակի նրան կսպանեի: Այս անգամ Աստված նույնիսկ չպատասխանեց: Ես նկատի ունենամ, որ դա ձախողված դեպք էր, նա պետք է սպասեր այնքան, մինչև հասներ երկինք և կատարյալ լիներ: Աստված աշխատելու է նրա հետ: Փառք Աստծուն: Մի՞թե դա քեզ չի երջանկացնում: Ոչ մեկն ավելի վատը չէ, քան նա:

«Եվ այն գիշերը Աստված այնպես արավ, միևնակ գգաթի վրա չորություն, և բոլոր գետնի վրա ցող եղավ»: «Հիանալի է~: Հիմա Աստված հաղթանակ է տանելու իմ միջոցով: Ես մի մեծ բազմություն եմ հավաքելու և գնալու եմ հաղթելու»: Երեսուներկու հազար մարդ եկավ Գեդեոնի հետ: Առջևում մեծ ճակատամարտ է, և Տիրոջ Հոգին Գեդեոնի վրա է: Ես համոզված եմ, որ նա ժողով էր հրավիրել Շրայնի դահլիճում և մարդկանց պատմել թաց և չոր գգաթի մասին: Երեսուներկու հազար մարդ էր հավաքվել: Ես կարող եմ տեսնել նրանց Լուս Անջելեսում. «Մենք հիմա կռվելու ենք գգաթի պատմության վկայի հետ»:

Աստված ասաց. «Գեդեո՛ն, քեզ հետ չափից շատ մարդ կա»: Աստված վրեժխնդիր էր լինում: Աստված վրեժխնդիր էր լինում: Ես նկատի ունեմ, որ Նա համբերությամբ տարել էր այս երիտասարդին իր բոլոր կասկածներով հանդերձ: «Հիմա դու կռվելու ես քառորդ միլիոն մադիանացիների և ամադեկացիների հետ»: Ամադեկացի նշանակում է «ռազմատենչ», այլ ոչ թե «փափուկ, ձգվող քաղցրավենիք»:

«Մարդիկ չափից շատ են, Գեդեո՛ն, դու տեսար, թե ինչ եղավ գգաթի հետ: Դու գիտես, որ Ես քեզ փրկելու եմ: Ինչի՞նչ է պետք այդքան մարդ»: Դե, ես ընկերոջ օգնության կարիք ունեմ, ես օժանդակության կարիք ունեմ: «Չափազանց շատ է, երեսուներկու հազարը չափազանց շատ է: Եթե նրանք բոլորը գնան քեզ հետ, կմտածեն, թե իրենք են հաղթել ճակատամարտը: Ասա նրանց, որ ով որ վախենում է, թող գնա տուն»: Քսաներկու հազարը հեռացան: Ի՞նչ է ասում. քսաներկու հազարը հեռացան: Վաթսուներեք տոկոսից ավելին հեռացավ: Հիմա ես ընդամենը ունեմ տասը հազար մարդ:

«Եվ Տերն ասեց» (4-րդ խոսք): Երրորդ խոսքն ասում է. «Եվ ժողովրդից քսաներկու հազար հոգի ետ դառան և մնացին տասը հազար»: «Եվ Տերն ասեց Գեդեոնին. Ժողովուրդը տակավին շատ է»: Տակավին շատ է՞: «Տակավին շատ է»: Տասը հազար: Աստված, գիտե՞ս, թե քանի մարդ կա բլրի վրա: Քառորդ միլիոն:

«Տակավին շատ է»: Գետակի մոտ իջեցրու նրանց և թող ջուր խմեն: Ես ջոկելու եմ նրանց: Ես նկատի ունեմ, որ Ես ցանկանում եմ հասկանալ, թե ում ունես քո կողքին: Հասկանում ես, դու կարող ես հրաշքների միջոցով բազմություն հավաքել շաբաթվա ցանկացած օր: Նրանք կգան գգաթի պատճառով: Տես, թե ինչպես են նրանք խմում: Նրանք, ովքեր իջնում են, իրենց զենքերը մի կողմ դնում և մտնում ջրի մեջ, նրանց գլուխը մտցրու տաք ջրի մեջ և ասա. «Փառք, հալելույա~»: Վռնդի՛ր այդ մարդկանց:

Նրանք, ովքեր ոչ հոգևոր են վարվում, նույնիսկ չեն կարող ջրի մոտ աղաղակել. նրանք շան նման ջուրը լակում են: Նրանք պահում են իրենց զենքերը և ամեն բոլոր շուրջը դիտում, իսկ ջուրը խմում են նույնիսկ առանց դադարի: Դա է կռվելու հարմար հումքը: Տեղավորիր նրանց այստեղ:

9700-ը աղաղակեցին և բղավեցին ջրի մեջ. 9700-ը «հոգևոր արթնության բաժակից խմեցին». այն արթնացրեց նրանց: Նրանց համար շատ լավ էր այնտեղ. բարձրաձայն բացականչում էին և ջուր խմում: Արդյո՞ք սա հիանալի չէ: Լավագույն ջուրը, որ երբևէ խմել եմ: «Գնացե՛ք ձեր տեղը»:

300... նրանք հոգևոր չեն: Նրանք նույնիսկ իրենց զենքերը չարձակեցին օրհնություն ստանալու համար: «Տեղավորի՛ր նրանց այնտեղ»: Այդ 9700-ը, որոնք «հոգևոր արթնությանն էին մասնակցել», գիտեին, թե իրենք են հաղթելու մարտը: Բայց երբ 300-ը մնացին, փառք Աստծո, որ մենք ազատվեցինք այդ անպետքներից: Աստված ասում է. «Դուք գնացեք, նրանք թող մնան»: Իսկ Գեղեճն ասում է. «300 մա՞րդ»: 300°: Այնտեղ քառորդ միլիոն են:

«Եվ Տերն ասեց Գեղեճին (7-րդ գլուխ, 7-րդ խոսք). Այն երեք հարյուր մարդիկներով ձեզ պիտի ազատեմ»: Որքանո՞վ կցանկանայիր Գեղեճի տեղում լինել: Աստված վրեժխնդիր էր լինում: Ես նկատի ունեմ, որ երկար ճանապարհ է անցել կալից մինչև այստեղ. գիշերը տասը մարդ վերցնելուց և ինչ-որ բաներ կտրելուց հետո երկար ճանապարհ է անցել: Գրեթե 300 000 մարդ կա, իսկ ես ունեմ ընդամենը 300 մարդ:

Հիմա, ինչն է ինձ դուր գալիս Աստծո մեջ. Նա ճանաչում էր Գեղեճին և չէր պատրաստվում երկրորդ անգամ անցնել նույն բանի միջով, այսինքն՝ Նա չէր պատրաստվում կրկին անցնել այդ «եթե...», «ինչու՞...», «ոհ...» շարանի միջով: Նա գիտեր, որ Գեղոնը վախենում է, ուստի ասաց նրան. «Եվ այն գիշերը (7-րդ գլուխ, 9-րդ խոսք) եղավ, որ Տերը նրան ասեց. Վեր կաց իջիր բանակը»: Գնա այնտեղ,

որտեղ քառորդ միլիոն թշնամիներ կան... «որովհետև նրանց քո ձեռքը մատնեցի»: Անցյալ ժամանակ. ուշադրություն դարձրեք դրան: Հաղթանակը արդեն կայացել էր: Նա ասաց. «Գնա այնտեղ, բայց եթե վախենում ես (կարծես թե չէր վախենում), եթե վախենում ես, - դու՝ թշվառ փոքրիկ նվնվացող վախկոտ կատու, - եթե վախենում ես, քո ծառային վերցրու, քեզ հետ վկա վերցրու, և իջիր բանակը»:

Գրեթե 300 000 զինվոր բանակ է դրել բլրի վրա: Ես Ֆիատ մակնիշի մեքենայով բարձրացել եմ այնտեղ և աչքի անցկացնելով փորձել հասկանալ, թե ինչ ես կանեի այդ գիշեր: Գրեթե 300 000 մարտիկներ վրաններով բանակ էին դրել այնտեղ: Տերն ասում է. «Գնա քո ծառայի հետ և լսիր, թե ինչ են խոսում, և հետո ձեռքերդ կուժեղանան: Այսպիսով նա գնաց իր ծառա Փուրայի հետ...»: Օ~, ինչպիսի անուն, Փուրա...: «Եվ նա իջավ ինքը և իր ծառա Փուրան բանակի մեջի գունդերի ծայրը: Եվ Մադիամն և Ամադեկը և բոլոր արևելցիները պառկել էին հովիտում մարախների պես բազմությամբ»:

«Եվ Գեդեոնը գնաց...»: Հիմա պատկերացրեք: Ամենաքիչը 150 000 վրան, միգուցե 200 000: Հաշվարկեք վիճակագրական հավանականությունը: Գեդեոնը և Փուրան գնում են Աստծո կողմից, որովհետև Աստված պատրաստվում է... (Իմաստ չկա սպասել, որ Գեդեոնն ասի, որ իրեն նշան ցույց տրվի. նշանը արդեն ցույց է տրվել): Աստված աշխատում է այս երիտասարդի հետ: Ուղարկում է նրան այնտեղ: Առավելագույնը 200 000 վրանների մեջ այնպես է պատահում, որ Գեդեոնը հայտնվում է հենց այս վրանի մոտ, և ահա մի մարդ մեկ այլ զինվորի հետ խոսում է՝ ասելով. «Անցյալ գիշեր ես ամենատարօրինակ երազը տեսա: Երազում մի գարեղեն հաց գլորվում էր դեպի Մադիամի բանակը, և եկավ վրանին հասավ և նրան այնպես զարկեց որ վայր ընկավ, և գլխիվայր դարձրեց. և վրանը վայր ընկավ: Եվ նրա ընկերը պատասխան տվավ և ասեց. Դա ուրիշ բան չէ, բայց միայն Իսրայելացի Հովասի որդի Գեդեոնի սուրը. Աստված Մադիամը և բոլոր բանակը նրա ձեռքն է մատնել»:

Այնպես պատահեց, որ 150 000 վրանների մեջ Գեդեոնը հայտնվեց հենց այնտեղ և լսեց, թե ինչպես է այդ մարդը երազ պատմում իր զինվոր-ընկերոջը: «Մեծ գարեղեն հացը գլորվում է և տապալում ամեն բան»: Իսկ նրա ընկերն ասում է. «Գիտե՞ս, թե դա ինչ է նշանակում: Ես կմեկնեմ քո երազը: Դա Գեդեոնն է, որ ոչնչացնում է մեզ»: Այդ ժամանակ Գեդեոնն իմացավ, որ Տերը ազատելու էր իրեն:

Նա հավաքեց 300 տղամարդկանց և ասաց. «Մափորների մեջ ջահեր դրեք, որպեսզի լույսը չերևա: Փողեր վերցրեք և 300 հոգով դիրք գրավեք թշնամու բանակի շուրջը և ազդանշանը լսելուն պես

կոտրեք սափորները: Սափորի ներսում պահված լույսը կսկսի փայլել: Փողերը փչեք և աղաղակեք.

«Տիրոջ և Գեղեոնի սուրը»:

Պատկերացրեք այս պատմությունը: Այդ 300 տղամարդը չէին գնացել Գեղեոնի և Փուրայի հետ: Այդ 300 տղամարդը չէին լսել երազի միջի հրաշք նշանի մասին: Այդ 300 տղամարդը պետք է կամենային ու հետևեին Աստծո ծառային և ռիսկի չդիմեին: Մի պահ ձեզ դրեք այդ մարմնից և ոսկրից կազմված 300 տղամարդկանց տեղը: Դուք գիշերվա կեսին, մի ձեռքում սափոր, մյուսում փողը: Դու պետք է կոտրես սափորը, որ լույսը փայլի, փողը փչես և աղաղակես. «Տիրոջ և Գեղեոնի սուրը»:

Հիմա, եթե այդ 9700 լինեին, որոնք գերհոգևոր էին, նրանք կանգ կառնեին և հանձնաժողովի հանդիպում կանցկացնեին՝ որոշելու, թե արդյո՞ք խոնարհություն կլինի ասել. «Գեղեոնը»: Ես նկատի ունեմ, որ իսկական հոգևոր մարդիկ ուղղակի ասում են. «Տիրոջ սուրը»: Աստված ցանկանում էր, որ հիշատակվեր Գեղեոնի անունը: Աստված միշտ գործել է տղամարդկանց և կանանց միջոցով, ովքեր առաջնորդում են, և մյուսների միջոցով, ովքեր հետևում են: Պետք չէ, որ դու ոչ խելամիտ լինես դա անելու համար. դա Աստծո եղանակն է:

Հիմա եթե լինեիր այդ 300 –ից մեկը, ինչ տեղի կունենար, երբ կոտրեիր քո սափորը և փչեիր քո փողը: Դու չգիտես, թե ինչ կանեին մնացած 299-ը: Իսկ ինչ, եթե դու միակն ես: Քառորդ միլիոն... Կոտրում ես... Հնչում է փողի ձայնը... «Տիրոջ և Գեղեոնի սուրը». և ահա ես՝ մեկ ջահով:

Յոթ տարի շարունակ ես ասել եմ, թե ինչ է ինձ ասել մի քահանա, երբ ես 16 տարեկան էի: Ես լսել եմ այդ քահանային՝ Սանտալինայում (Կալիֆորնիայի նահանգ) քարոզելիս, և իրականում չգիտեմ, թե ինչի մասին էր նա քարոզում: Ես պարզապես հիշում եմ պատկերավոր օրինակը. այն փոխեց իմ կյանքը՝ որպես 16 տարեկան երեխա: Նա ասում էր. «Պատերազմները տանում են մի զինվորով, որը շարժման մեջ է դնում ուղերձը: Նա չի հարցնում. «Արդյո՞ք մյուսները կշարժվեն»: Կամ «Արդյո՞ք նոնակները չեն վրիպի կամ ինքնաթիռները ժամանակին կգան»: Նա պետք է այնպես շարժվի, կարծես ամբողջ պատերազմը իրենից է կախված»:

Նույնը պետք է տեղի ունենար այստեղ: Ի՞նչ կլինեք, եթե 300-ից մեկը կամ բոլոր 300-ն ասեին. «Ի՞նչ կարող եմ ես անել: Ի՞նչ կարող եմ 300-ն անել»: Եվ նշանակված ժամանակին... Ուղղակի պատկերացրեք այս տեսարանը, որովհետև բոլորն արեցին դա: Դու մադիանացի ես և քնած ես: Ես նկատի ունեմ, որ դու կիսահարբած գտնվում ես քո վրանում: Ես նկատի ունեմ, որ դու իսկապես ոչնչից

տեղյակ չես: Եվ նշանակված ժամին՝ գիշերվա մթին... ամբողջ վայրով մեկ 300 տղամարդ կոտորում է սափորը, և շուրջ բոլորը լույսի շող է երևում, որովհետև բոլորը դա արեցին: 300 մարդ փչում են իրենց փողերը և աղաղակում. «Տիրոջ և Գեղոնի սուրը»: Հը՞: Նրանք դուրս եկան. պոկեցին վրանների սեպերը, որպեսզի դուրս գան: Նրանք սկսեցին գնալ բոլոր ուղղություններով. այնքան շփոթված էին, որ սկսեցին իրար սպանել: Գիտե՞ք, թե ինչ պատահեց: Գրանից հետո նրանց քշեցին երկրից դուրս, և նրանցից ավելի քան 100 000 մարդ մորթվեց, որովհետև Աստված հաղթանակ տվեց Գեղեոնին և նրա մարդկանց: Եվ դրանից հետո սկիզբ դրվեց 40 տարվա խաղաղության:

Ուղերձը շատ պարզ է: Աստված չեկավ և անձամբ չկատարեց աշխատանքը: Նա եկավ և մարդուն խնդրեց, որ իր իրավիճակի մեջ սկսի հավատալ Իրեն և մարմնով կառչել դրանից, իսկ մնացածը Ինքը կաներ: Նա 300 հոգու գտավ, ովքեր պատրաստ էին հավատալ Տիրոջ ծառայի ձայնին և մարմնով կառչել դրանից, իսկ Աստված արեց մնացածը: Ես անընդհատ օգտագործում եմ այդ տեսարանը՝ որպես զոհաբերության խորհրդապատկեր, զոհաբերության այնպիսի գործողություն, որը քեզ թողնում է բախտի քմահաճույքին: Դու չունես հավատք, մինչև քեզ չդնես անպաշտպան լինելու դիրքում, դիմես զոհաբերության այնպիսի գործողության, որը քեզ խոցելի կդարձնի: Երբ նրանք կոտորեցին այդ սափորները, այդ նվիրումը նրանց ողողեց լույսով լույս արձակելու համար: Եվ նրանք նվիրվեցին: Երբ նրանք հնազանդվեցին ծառայի միջոցով ասված Տիրոջ խոսքին և իրենց մարմնով կառչեցին դրանից, Աստված արեց մնացածը:

Ես չունեմ նոր բանաձևեր ութերորդ տարին նոր ձևով սկսելու համար: Ես քարոզում եմ նույն քարոզը, ինչ քարոզում եմ յոթը տարի առաջ այստեղ գալուց ի վեր: Եթե դու դադարես վիճել Աստծո Խոսքի հետ, նվիրվես, և մարմնով կառչես դրանից, Աստված կշարունակի անել մնացածը, ինչպես արել է վերջին յոթ տարիներին: Մեզ հաշվի չեն առել ավելի շատ անգամ, քան ես կարող եմ հաշվել: Հիշեք, մենք դեռ այստեղ ենք, և «Տիրոջ սուրը», որը Նոր կտակարանում Նրա Խոսքն է, «հաղթող է»:

Թող ամեն մեկը ոտքի կանգնի, և ես ուզում եմ, որ դուք ասեք. «Մենք հաջողությամբ անցանք հաջորդ յոթ տարիները», - կամ այստեղ կամ այնտեղ: Թույլ տվեք լսել ձեր վկայությունը: «Մենք հաջողությամբ անցանք հաջորդ յոթ տարիները»: Դա ճիշտ է: